ջարի[1] եւ Սամանդարի[2] մօտից նա հասաւ Սպիտակ (քաղաքը)[3], ուր գտանուում էր խաքանը. վերջինս փախաւ նորա առջեւ։

120 թ. Հայաստանի եւ Ատրպատականի կառավարիչն էր Մրբվան ի. Մուհամեդ։

121 թ. Մրբվան ի Մուհամեդ արշաւեց Հայաստանից եւ եկաւ Սարիրի տոհմական բերդը, սպանեց, գերեց. գալով երկրորդ բերդը նա նմանապէս սպանեց, գերեց։ Ապա մտաւ Ղաուտիկ ամրոցը, որտեղ կը գտանուէին թագաւորի գուտարը եւ նորա աթոռը. թագաւորը այնտեղից փախստական ընկաւ Խիզաջ ամրոցը, ուր էր նորա սոսկեղուն աթոռը. Մրբվան հետեւեց նորան. այն ժամանակ թագաւորը խաղաղութիւն կապեց նորա հետ՝ տարեկան 1000 ստրուկ եւ 100.000 մոդիա նորան տալու պայմանով։ Մրբվան ապա մտաւ Աղուրթարան երկիրը, որի իշխանը հաշտութիւն հաստատեց նորա հետ, որպէս եւ Ցուման երկրի իշխանը։ Գալով Համդեն երկիրը նա պաշարեց նորա ամրոցը մի ամիս շարունակ, մինչեւ (բնակիչք) խաղաղութիւն կապեցին։ Մասդաղ (?) երկիրը Մրբվան նուաճեց խաղաղութեամբ։ Կիրանում բանակելիս նորա հետ հաշտութեան դաշն կնքեցին Ցաբարսարան, Ֆիրան եւ Ծովափեայ բոլոր գաւառները, որոնք Հայաստանում Ցաբարիստանի հանդէպ կը գտանուին։

126 թ. Եզիդ գրեց Մուհամեդ ի. Մրբվանին կառավարիչ Միջագետքի, Հայաստանի, Մո-

---

1 Jakut կ'անուանէ Բաբ-էլ-Աբուաբի (Դերբենդի) մօտ։ Հմմտ. Բալաձուր թիբարնակ գիւղը Դերբենդից հարաւ, այժմ երկաթուղու կայարան։

2 Istaxri յիշում է խազարաց մայրաքաղաք Խիլի (Հաշտարխան) եւ Բաբ-էլ-Աբուաբի մէջ։ Ուրեմն Բալանջարից հիւսիս։

3 Jakut կը յիշէ Բէյդա քաղաք խազարաց երկրում. պարելու է Դերբենդից հիւսիս այժմեան Պետրովսկ քաղաքի մօտերքը։